Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ ԻՏԱԼԻԱՅԻՑ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԻՍ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ

ՎԱՏԻԿԱՆ

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Իտալիայեն մեկնելուց առաջ կուզեմ Ձերդ Սրբությանը հայտնել իմ խորը շնորհակալությունն ու գնահատանքը այն մեծ ազնվության համար, զոր այնքան սքանչելի և պերճախոս կերպով ցույց տվիք Մեզ և Մեզի ընկերացող պատվիրակության հանդեպ՝ Ձեզի և Հռոմի Կաթողիկե եկեղեցուն տված եղբայրական այցելության առթիվ:

Հիրավի, մեր հանդիպումները, աղոթքի և զրույցներու մեջեն, մեծապես օգտակար եղան՝ հառաջ տանելու համար եղբայրական հարաբերությունները մեր երկու եկեղեցիների միջև՝ ամբողջական միասնության վերաստեղծման ճանապարհին:

Մենք շատ ուրախ ենք, որ միասնության նույն ոգին տեսանք Ձեր բոլոր գործակիցներուն մեջ, Վատիկանի այլազան բաժանմունքներում, հատկապես Քրիստոնեական Միության Զարգացման Հանձնաժողովի կողմե:

Կաղոթենք առ Բարձրյալն Աստված, որ Ձերդ Սրբությանը շնորհե մշտատև առողջություն, որպեսզի կարողանաք ավելի մեծ ծառայություն մատուցել Ձեր եկեղեցուն և ընդհանուր մարդկությանը:

Եղբայրական սիրով՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

19 դեկտեմբեր 1996 թ.